

ՀՀ գլխավոր դատախազ
Ա.Դավթյանին

«Վելես» իրավապաշտպան հասարակական կազմակերպության
նախագահ Մարինա Պողոսյանից,
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենց 4, բն. 121
Հեռախոս՝ (091) 40-35-13

Դիմում

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱԲԴ/0239/01/16 քրեական գործով 2018 թվականի փետրվարի 22-ին կայացած դատական նիստի ընթացքում փաստաբան Հրանտ Անանյանի կողմից քննող դատավոր Մ. Մարտիրոսյանին ներկայացվել է 17/02/2018թ.-ով թվագրված լիազորագրի պատճեն, որն, ըստ փաստաբան Հ. Անանյանի հայտարարության՝ նույն քրեական գործով տուժող, հանգուցյալ Արփի Մերասի որդիներ Սարո Մարկ Մերասի և Սուրեն Դավիդ Մերասի կողմից տրված լիազորագրի պատճեն է: Ներկայացված լիազորագրի պատճենում Սարո Մարկ Մերասի և Սուրեն Դավիդ Մերասի անունների դիմաց դրված ստորագրությունների գուտ վիզուալ համեմատությունը փաստաբան Հ. Անանյանի կողմից ներկայացված՝ նրանց անձնագրերի պատճեններում առկա ստորագրությունների հետ, ակնհայտ է դարձնում, որ լիազորագրի պատճենում առկա ստորագրությունները առերևույթ որևէ ընդհանրություն չունեն նույն անձանց կողմից անձնագրերում կատարված ստորագրությունների հետ և բոլորովին այլ են:

Հրանտ Անանյանի կողմից ներկայացված լիազորագրում և այլ փաստաթղթերում կատարված ստորագրությունների տարբերությունները հիմք են տալիս ողջամիտ կասկած հայտնելու, որ ներկայացված լիազորագիրը ստորագրվել է ոչ թե Սարո Մարկ Մերասի և Սուրեն Դավիդ Մերասի կողմից, այլ ուրիշ անձի/անձանց կողմից, ինչն իր հերթին վկայում է այն մասին, որ տվյալ լիազորագիրը ստորագրած անձի/անձանց կողմից կատարվել է կեղծիք:


Բացի այդ, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում 20/07/2015թ.-ին մուտքագրվել է Արփի Մերասի անունից հանցագործության մասին հաղորդում, իսկ այդ հաղորդման կապակցությամբ նյութերի նախապատրաստման ընթացքում ներկայացվել է փաստաբան Հրանտ Անանյանին Արփի Մերասի անունից պետական և այլ մարմիններում հանդես գալու լիազորություններ վերապահող, 15/07/2015թ.-ով թվագրված լիազորագիր: Թե հանցագործության մասին հաղորդման մեջ և թե լիազորագրում Արփի Մերասի անվան դիմաց առկա ստորագրությունները առերևույթ որևէ ընդհանրություն չունեն Արփի Մերասի անձնագրում, ինչպես նաև 22/10/2012թ.-ին Արփի Մերասի կողմից Մարինա Պողոսյանիս տրված լիազորագրում և մի շարք այլ փաստաթղթերում,

մասնավորապես՝ 29/09/2016թ.-ին Արփի Մերասի և Մարինա Պողոսյանիս միջև կատարված առերես հարցաքննության արձանագրության մեջ, 10/01/1994թ.-ին կազմված Արփի Մերասի կտակում առկա նրա ստորագրությունների հետ: Նշվածը նույնպես հիմք է հանդիսանում ողջամիտ կասկած հայտնելու, որ 20/07/2015թ.-ին մուտքագրված հանցագործության մասին հաղորդման մեջ և 15/07/2015թ.-ով թվագրված լիազորագրում Արփի Մերասի անվան դիմաց առկա ստորագրությունները չեն կատարվել նրա կողմից, այլ կեղծվել են այլ անձի/անձանց կողմից:

Հատկանշական է, որ ստորագրությունների կեղծված լինելու մասին ողջամիտ կասկածներ առկա են թե Արփի Մերասի, թե նրա որդիների՝ Սարո Մարկ Մերասի և Սուրեն Դավիդ Մերասի անունից կատարված ստորագրությունների կապակցությամբ, ինչը կարող է վկայել, որ գործ ունենք անձի/անձանց հետ, ում համար այլ անձանց փոխարեն իրավունք վերապահող փաստաթղթերում ստորագրելը սովորական գործելակերպ է:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 17/02/2018թ.-ով թվագրված, ինչպես նաև 15/07/2015թ.-ով թվագրված, Հրանտ Անանյանի կողմից ներկայացված երկու լիազորագրերը հանդիսանում են իրավունք վերապահող փաստաթղթեր՝ խնդրում եմ սույն դիմումն ընդունել որպես հանցագործության մասին հաղորդում, հարուցել քրեական գործ, նախաքննություն իրականացնելու համար գործն ուղարկել համապատասխան քննչական մարմին՝ ենթադրյալ հանցագործություն կատարած անձի/անձանց ինքնությունը պարզելու և քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Կից ներկայացնում եմ՝ (1) 17/02/2018թ.-ով թվագրված լիազորագրի պատճենը՝ մեկ թերթից, (2) Սարո Մարկ Մերասի անձնագրի պատճենը՝ մեկ թերթից, (3) Սուրեն Դավիդ Մերասի անձնագրի պատճենը՝ մեկ թերթից, (4) 20/07/2015թ.-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում մուտքագրված հանցագործության մասին հաղորդման պատճենը՝ երկու թերթից, (5) 15/07/2015թ.-ով թվագրված լիազորագրի պատճենը՝ մեկ թերթից, (6) 22/10/2012թ.-ին Արփի Մերասի կողմից Մարինա Պողոսյանիս տրված լիազորագրի պատճենը՝ մեկ թերթից, (7) 29/09/2016թ.-ին Արփի Մերասի և Մարինա Պողոսյանիս միջև կատարված առերես հարցաքննության արձանագրության պատճենը՝ տասը թերթից, (8) 10/01/1994թ.-ին կազմված Արփի Մերասի կտակի պատճենը՝ հինգ թերթից:


Մ. Պողոսյան

02/03/2018թ.